ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/54» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

17.08 2020թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (գնահատող աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ))՝

- ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան,

Գնահատողներ՝

- ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Գ. Ուստյան,
- ՀՀ ՋՈՒ ԹՎ իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիքալվացարարային ապահովման բաժանմունքի ավագ ինժեներ, մայոր Մ. Երամյան,
- ՀՀ ՋՈՒ ԹՎ իրային ծառայության իրային գույքի պլանավորման և ապահովման բաժնի սպա, կապիտան Ա. Համբարձումյան.

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի ավագ մասնագետ Ա. Հովհաննիսյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/54» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Հովհաննիսյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/54» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/54» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.
6. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Հովհաննիսյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **ապրանքների** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/54» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1.	«ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ
2.	«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ
3.	«Գիլոյան Եղբայրներ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/54» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Ա. Հովհաննիսյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/54» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Ա. Հովհաննիսյան)

3.1 Գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Գնման առարկա	Չ/մ	Քանակը	Նախահաշվ. գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների					Ընտրված մասնակցի անվանումը
					Հ/հ	Անվանումները	Գնային առաջարկ ՀՀ դրամ			
							Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին	
1.	Վերմակներ /ծածկոց/	հատ	9,200	69,680,000	-	-	-	-	-	-
2.	Զինվորական վրաններ /վրան 2-3 տեղանոց/	լ-կ	450	10,800,000	1	«ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ	7,987,500	1,597,500	9,585,000	«ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ
3.	Կիսավերարկու / կիսավերարկու կիսաբրդյա/	հատ	2,000	40,000,000	1	«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ	33,330,000	6,666,000	39,996,000	«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ
4.	Ամենօրյա կոշկեղեն /կոշիկ՝ խրոմե/	զույգ	6,566	43,729,560	-	-	-	-	-	-
5.	Ամենօրյա կոշկեղեն /կոշիկ՝ կարճաճիտ խրոմե/	զույգ	2,760	19,210,428	-	-	-	-	-	-
6.	Կիսավերարկու / վերարկու կիսաբրդյա ՊՊՎ/	հատ	220	17,600,000	1	«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ	14,666,300	2,933,260	17,599,560	«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ
7.	Բարձ՝ բամբակյա /բարձ՝ 58x48 սմ/	հատ	10,000	19,980,000	1	«Գիլոյան Եղբայրներ» ՍՊԸ	15,000,000	3,000,000	18,000,000	«Գիլոյան Եղբայրներ» ՍՊԸ
8.	Ներքնակներ /Ներքնակ՝ 185x65x7.0 սմ/	հատ	10,000	57,550,000	-	-	-	-	-	-

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են հրավերի պայմաններին (ճիշտ են):

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/54» ծածկագրով գնման ընթացակարգի **2, 3, 6 և 7**-րդ չափաբաժինների մասով հրավերի պայմաններին համապատասխան ոչ գնային պայմանները բավարարող գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը միակն է, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ.N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի հավելված 1-ի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, որոշեց նիստը կասեցնել և մասնակիցներին ծանուցել, որ գների նվազեցման նպատակով **24.08.2020թ. ժամը 15:40-ին** ՀՀ ՊՆ ԳԿՎ նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպվել են բանակցություններ:

24.08.2020թ. կազմակերպված բանակցություններին ներկայացել են «Քանաքեռի կարի ֆաբրիկա» և «Գիլոյան Եղբայրներ» ՍՊ ընկերությունները, չեն նվազեցրել գնային առաջարկները ուստի ներկայացված գնային առաջարկները մնացին անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/54» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր գբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Հովհաննիսյան)

4.1 **24.08.2020թ.**-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/54» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնահատված մասնակիցներից ընտրված մասնակից հայտարարել.

- **«ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ՝ 2-րդ չափաբաժնի մասով,**
- **«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ՝ 3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով,**
- **«Գիլոյան Եղբայրներ» ՍՊԸ՝ 7-րդ չափաբաժնի մասով:**

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով սույն ընթացակարգը **1,4,5 և 8-րդ** չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/54» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/54» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.5 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/54» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.
(Ա. Հովհաննիսյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/54» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
(Ա. Հովհաննիսյան)

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝ Հ. Մելիքյան

Գնահատող՝ Գ. Ուստյան

Գնահատող՝ Մ. Երամյան

Գնահատող՝ Ա. Համբարձումյան

Գնումները համակարգող՝ Ա. Հովհաննիսյան